


ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Գ. Սրվանձտյանցի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Անցյալ և ընթացիկ դարում շատերն են մեզանում զբաղվել ժողովրդապան անդիր բանահյուսության դրառման և հրապարակման գործով: Հայ բանահյուսության այդ բազմաթիվ երախտավորների շարքում կա մեկը, սակայն, որի կատարած դերը բացառիկ է: Դարեգին Սրվանձտյանցն է դա, մեր բանա-



հավաքների ճանաչված ռահվիրան: Նրա անվան հետ է կապված հայ բանահյուսության տասնյակ ընտիր նմուշների և առաջին հերթին հայոց ազգային ժողովրդական մեծ վեպի՝ «Սասնա ծռերի» կամ «Սասունցի Դավթի» հայտնագործման նշանակալից փաստը: Սրվանձտյանցի հետևորդներն ու աշակերտներն են եղել մեր լավագույն բանահավաքները թե՛ Արեմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում (Գ. Շերենց, Հ. Ճանիկյան, Տ. Նավասարդյան, Գ. Տեր-Աղեքսանդրյան և ուրիշներ):

Դարեգին Սրվանձտյանցի՝ որպես բանահավաքի հանդես գալը տվյալ ժամանակաշրջանում պատահական չէր: Նա հարազատ ծնունդն էր XIX դարի 50—60 և հատկապես 70—80-ական թթ. հայ կյանքում տեղի ունեցող հասարակական նոր հարաբերությունների և մտավոր նորոգ երևույթների: Նրա մեջ ուրույն ձևով դրսևորվել են մի կողմից 50—60-ական թթ. մեր ազգային լուսա-

վորիչների, մյուս կողմից 70—80-ական թթ. գյուղացիական դեմոկրատների բնորոշ գծերից մի քանիսը:

Մի ժամանակաշրջան էր գա, երբ հայ ժողովուրդը թևակոխում էր պատմական կյանքի մի նոր փուլ: Կապիտալիզմի զարգացման հետևանքով սկսել էր խարխուլել դաբերով սրբագործված նրա նահապետական գոյակերպը, փոխվում էին հնօրյա բարքերը: Մի շրջան էր գա, երբ մեղանում բուռն վերելք էին տալիս ազգային-ազատագրական ոգորումները, երբ հասարակական լայն զանգվածները սկսել էին տոգորվել ապագայի ուժանտիկ երազանքներով:

Ազգային ինքնորոշման նշանաբանի տակ հայ ժողովուրդը ի տես աշխարհի ասպարեզ էր հանում իր բազմադարյան հոգևոր ու մտավոր հարստությունները, իր ներկան ու անցյալը, իր ինքնությունը: Սկսում են նորանոր հետադուրություններ կատարվել հայոց պատմության, լեզվի, դրականության, ազգագրության բնագավառներում: Ժողովրդական բառ ու բանի նկատմամբ տասնամյակներ առաջ ծայր առած տարերային հետաքրքրությունը 70—80-ական թթ. դառնում է գիտակցված անհրաժեշտություն: Ասպարեզ են զալիս հատուկ բանահավաքներ, իբրև ուսումնասիրության ուրույն ու կարևոր մի բնագավառ հանդես է գալիս բանագիտությունը:

Հայ բանահյուսության պատմության շրջադարձային այդ փուլի հիմնադիրն է ահա մեղանում Գարեգին Սրվանձտյանցը:

Գարեգին Սրվանձտյանցը ծնվել է 1840 թ. դեկտեմբերի 12-ին (հ. տ.) Վանի Այգեստան կոչված քաղաքամասում, Սրվանձտյանների բազմադամ ընտանիքում:

Մանուկ Յհանեսը (այդպես է եղել Սրվանձտյանցի մկրտության անունը) սկզբից եկեղեցի էր սովորում և ընկել վառ երևակայությամբ, սրամտությամբ, խելքով ու արտակարգ հիշողությամբ: Տակավին նախադպրոցական հասակի երեխանա սովորություն է ունեցել հորենական այգու սաքուի շուրջը գլխին հավաքել հասակակից երեխաներին և պատմել նրանց «մամիկներից» ու «պապիկներից» սովորած՝ յոթ գլխանի դեկրի, վիշապ-օձերի և հուրնիկ-հրեղեն աղջիկների հեքիաթները:

Նախնական կրթությունը Սրվանձտյանցը ստացել է հայրենի քաղաքի Հայնկույսների վարժարանում, հռչակված վարժապետներ Մահտեսի Հովհաննեսի (Քոլոզ կոչեցյալ) և Ավետիս Սահառունու մոտ:

Տարիներ անց (1857 թ.) Սրվանձտյանցին հաջողվում է ընդունվել Մկրտիչ Խրիմյանի հիմնադրած Վարադա վանքի ժառանգավորաց դպրոցը: Այստեղ նա առաջին անգամ կարդում է Եղիշեի Վարդանանց պատերազմի պատմությանը նվիրված հռչակավոր մատյանը և խանդավառվում Վարդանանց բաջրի հերոսապատումներով: Այստեղ էլ նա փոխում է իր մկրտության անունը և Վարդան Մամիկոնյանի անվան հերոսներից մեկի՝ Գարեգին Սրվանձտյանցի անունով ինքն իրեն կոչում՝ Գարեգին:

Սրվանձտյանցի գրական առաջին քայլերը կատարվում են 50-ական թթ. վերջերին և 60-ականների սկզբներին, Վարադա վանքում, Խրիմյանի խմբագրությամբ հրատարակվող «Արծվի Վասպուրական» ամսաթերթի էջերում, ուր նա տպագրում է գրաբար լեզվով իր աշակերտական ոտանավորները և մի շարք հայրենասիրական հոդվածներ՝ V դարի պատմական նշանավոր իրադարձությունների մասին:

Վարդադա դպրոցն ավարտելուց հետո Սրվանձտյանցը խրիմյանի կողմից կարգվում է նույն դպրոցի ուսուցիչ և «Արծվի Վասպուրական» թերթի խմբագրի տեղակալ։ Նույն այդ շրջանում Վարդ գրական մականունով նա ըսկրսում է աշխատակցել Պոլսի, Իզմիրի և Թիֆլիսի մի շարք պարբերականներին («Մասիս», «Արևելյան Մամուլ», «Մանգումե էֆքյար», «Կոունկ», «Մեղու Հայաստանի»), ուր, լրագրական բնույթի իր ակնարկ-թղթակցությունների մեջ, նա իրապատում և ճշմարտացի պատկերներով նկարագրում է Արևմտյան Հայաստանի գավառների հայ աշխատավորության կյանքի ծանր պայմանները, սեփական ու այլազգի հարստահարիչներից նրա կրած անլուր տառապանքները։ Նույն այդ պարբերականների էջերում մեկ-մեկ սկսում են տպագրվել նաև ժողովրդական բառ ու բանի այն նմուշները (առած, ասացվածք, զրույց, երգ և այլն), որոնք Սրվանձտյանցը առիթ էր ունեցել զրի առնելու հետագայում իր պաշտոնական ուղևորությունների ժամանակ։

«Անցածս ու գտնվածս տեղերը, ուր բազմակողմանի և ներքին ու արտաքին կնճռոտ խնդիրներ և դժվարություններ կգրադեցնեին անձս ու միտքս,— զրել է նա այդ առթիվ,— կգտնեի տակավին ըոպեններ և ժամեր՝ մտավոր վաստակոց և զբոսանաց, ժողովրդական բարուց և ավանդությանց աղն ու մաղը, խաղն ու տաղը, հողն ու ջուրը, կիրքն ու գիրքը խառնելու, ինչպես հոտաղ մը արտը վարելուն՝ հողերու տակեն կժողովե պղնձի կամ երկաթի կտորներ, որոնց ժանգը եթե սրբես, բան մը են, կամ եզները արածելու և հանգչեցնելու ժամուն, կերթա հոտաղն կնստի գետի մը ափը, կամ հեղեղի մը անցած տեղը, և ավազները խառնելով կգտնե ու կժողովե ունիներ, որոնց մեջ կգտնվին երբեմն նաև մարգարիտներ, ակունքներ և ժանգոտած դրամներ, որք սեկայն հնագետի մը կամ արվեստավորի մը ձեռքը հասնելով՝ կգնահատվին։ Այդ հոտաղն էի ես, և անոր զբոսանքը կղբոսնուի»¹։

Ընդամենը մի քանի տող կազմող այս պատկերավոր ինքնաբնութագիր համեմատության մեջ անուղղակիորեն բացահայտված է հեղինակի բազմամյա բանահավաքչական բեղմնավոր գործունեության բնույթն ու էությունը, վեր է հանված այդ գործունեության հասարակական և կուլտուր-ճանաչողական անուրանալի արժեքն ու նշանակությունը։

Ժողովրդի կյանք ու կենցաղին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով, Սրվանձտյանցը խրիմյանի հետ, իբրև նվիրակ ու քարոզիչ, շրջագայության է դուրս գալիս ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանի զանազան գավառները, հասնում մինչև Թիֆլիս և էջմիածին։ Վերադառնալով Մուշ, նրանք իրենց հավաքած նվիրատվություններով դպրոց են բացում Ս. Կարապետի վանքում և հիմնում են «Արծվիկ Տարոնո» պարբերաթերթը։ Մոտիկից ուսումնասիրելով Մշո դաշտի բնակիչների կյանքն ու կենցաղը, Սրվանձտյանցը այդ հիման վրա «Մանգումե» թերթի էջերում տպագրում է մի ընդարձակ հոդվածաշար՝ «Մշեցոց վրա ընդհանուր տեսություն մը» խորագրով, ուր մանրամասն նկարագրում է այն անմխիթար վիճակը, որի մեջ գտնվում է հայազգի ցեղերի և այլազգի կողոպտիչների հարստահարության զոհ մշեցի աշխատավոր գյուղացին։

Ահա մի բնորոշ դրվագ այդ նկարագրությունից. «...Պարտք, աշխատություն, բանտ, տուգանք, արտասուք մինչև մահվան օրը, քրտինք հեղեղի պես

1 Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Պոլիս, 1884, էջ Բ—Դ։

և անոր մեկ կաթիլն անգամ իրեն բաժինը չէ: Ծեծ ոսկորները փշրելու շափ, ստրկություն քան զգերություն զեշ վիճակ»: Եվ ապա. «Մուշր մշավ, Տարոնը տարան. անոր բնակիչները հետզհետե փախան, շատերն անոթութենե մեռան... վերջին գութարերին կսպասեք, որ դա և գութե, թե ահա Տարոնա տունը ամբողջ փլավ, և յուր որդիքը տակը մնալով ողջ ողջ մտան գերեզման...»²:

1864 թ. վարդապետ ձեռնադրվելով, Սրվանձտյանցը ուղարկվում է իր հայրենի վան քաղաքը՝ իբրև քարոզիչ: Ժամանակակիցները հիացմունքով են պատմում վանում նրա ունեցած գործունեության մասին, հատկապես նշելով նրա կարդացած ողելունչ հայրենասիրական քարոզները՝ վարդան Մամիկոնյանի, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և V դարի մյուս ականավոր գործիչների մասին:

1868 թ. Սրվանձտյանցը նշանակվում է Կարնո ուսումնարանների լիազոր-տեսուչ: Սկսվում և զնալով լայն ծավալ է ստանում նրա մանկավարժական գործունեությունը, բացահայտվում են տվյալ ասպարեզում նրա ունեցած անուրանալի տվյալները:

Անհրաժեշտ է նշել, որ Սրվանձտյանցն առհասարակ եղել է իր ժամանակի լավագույն մանկավարժներից, քաջ ծանոթ նոր մանկավարժության հիմնական սկզբունքներին: Նրա կազմած մայրենի լեզվի դասագիրք-ընթերցարանները արժանացել են բարձր գնահատականի և իբրև ձեռնարկ օգտագործվել արևմտահայ դպրոցներում:

Լեզուն համարելով յուրաքանչյուր ազգի կամ ժողովրդի գոյության ու հարատևման հիմնական պայմաններից մեկը, Սրվանձտյանցն իր ընթերցարան-դասագրքերի մեջ մեծ ուշադրություն է նվիրում մայրենի լեզվի ճշգրիտ ուսուցմանը: Իրա հետ մեկտեղ նա իր դասագրքերում լայն տեղ է տալիս հայոց պատմության հերոսական դրվագներին, Հայաստանի բնության գեղատեսիլ վայրերի նկարագրություններին և հայրենի ուշադրավ ավանդություններին ու առասպելներին: Նա աշխատում է սեր արթնացնել մանուկ սերնդի մեջ դեպի հայրենիքը, դաստիարակել նրան հայրենասիրական ոգով:

Ինչպես հետզհետե բնդլայնվում են Սրվանձտյանցի գործունեության շրջանակները: Պոլսի պատրիարքարան, ազգային ժողով, առաջնորդական պաշտոնների առաջարկներ Պոլսից, Տիգրանակերտից, Ակնից ու այլ հայաբնակ վայրերից...: Նա միշտ առիթ էր գտնում զբաղվելու ժողովրդի կյանք ու կենդանությունը, ծանոթանալու վերջինիս ավանդական բանահյուսության դարավոր ստեղծագործություններին:

Այդպիսի մի հարմար առիթ է ներկայանում Սրվանձտյանցին 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, երբ նա Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից հատուկ կոնդակով գործուղվում է շրջելու «ի բնագաւառս մայրենի և տեղագրել զամենայն ամենայնի... զի հաւաքեսցէ զկարևոր տեղեկութիւնս գորպիսութենէ ժողովրդեան և ներկա կացութենէ նոցին, վիճակագրեսցէ զեկեղեցիս և զդպրոցս և զվանորայս ազգիս զէն և զանշէնս...»³:

Հոժարակամ պատրաստակամությամբ հանձն առնելով այդ կարևոր գործը, Սրվանձտյանցը հերթով սկսում է շրջել հայաբնակ բազմաթիվ վայրերում (Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարդվան, Ամասիա, Թոքատ, Պաֆրա, Սինոպ,

Տիվրիկ, Ակն, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արարկիր, Բաղեշ, Վան, Մուշ), ուշի-ուշով ուսումնասիրել հարազատ ժողովրդի վիճակը, մոտիկից հաղորդակից դառնալ նրա կարիքներին ու ցավերին:

1879 թ. հրիմյան Հայրիկը, հրաժարվելով Պոլսի պատրիարքությունից՝ վիճակավոր առաջնորդի պաշտոնով դալիս է Վան: Նրա հետ, որպես առաջնորդի օգնական, հայրենի քաղաքն է վերադառնում նաև Սրվանձտյանցը, ուր մի քանի տարի աշխատելուց հետո, 1884 թ. նորից վերադառնում է Պոլիս, որտեղից 1885 թ. մեկնում է Տրապիզոն՝ ստանձնելով այնտեղի հայոց առաջնորդի պարտականությունները:

Սրվանձտյանցի հայրենանվեր, եռանդուն դործունեությունը Տրապիզոնում շարժում է սուլթանի տհաճությունը և նա 1888 թ. պատրիարքի հրամանով կանչվում է (ավելի ճիշտ՝ աքսորվում է) Պոլիս, ուր և ստիպված է լինում մնալու (իբրև սոսկական քարոզիչ) մինչև մահը, որը տեղի է ունենում 1892 թ. նոյեմբերի 17-ին, 52 տարեկան հասակում, Պոլսի Փրկչի ազգային հիվանդանոցում, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո:

Գարեգին Սրվանձտյանցի մուտքը հայ գրականության մեջ նշանավորվել է 60—70-ական թթ. գրված՝ «Ողբերգություն մեծին Սահակայ Պարթևի և անկումն Արտաշրի Արշակունւոյ» և հատկապես «Շուշան Շաւարշանայ» թատերական երկերով (1875 թ.):

Զնայած իրենց գեղարվեստական անկատարությանը, Սրվանձտյանցի հիշյալ երկերը աչքի են ընկնում հայրենասիրական պաթոսով և բանաստեղծական անկեղծ շնչով: Առաջինի մեջ հեղինակը ողբում է Արշակունյաց հարստության անկումը և սեր ու միաբանություն է քարոզում իր ժողովրդին: Երկրորդի մեջ նա ցույց է տալիս Վարդանանց անձնագոհ հերոսամարտը պարսից բազմամբոխ բանակների դեմ և քաջալերում է ժամանակակից հայ երիտասարդությանը՝ Վարդանի օրինակով մարտի ելնելու իրենց ազգային ոխերիմ թշնամու դեմ:

60—70-ական թթ. հայ պատմական ողբերգությունների մեծ մասի նման, Սրվանձտյանցի թատերական երկերը ևս յուրահատուկ արձագանքն էին Զեյթունի 1862 թ. հերոսամարտերի, որոնք այն ժամանակ մեծ խանդավառություն էին առաջ բերել հայ ժողովրդի ամենալայն շրջանների մեջ՝ թե՛ քաղաքային կենտրոններում և թե՛ գավառներում, նոր ուժ ու թափ հաղորդելով ազգային-ազատագրական շարժման գաղափարների արժարժմանն ու տարածմանը:

Զնայած այն հանգամանքին, որ սուլթանական Թուրքիայի կառավարությունը Զեյթունի ապստամբությունից հետո կրկնապատկեց իր ճնշումն ու հալածանքը հայերի նկատմամբ, այսուհանդերձ ազգային ազատագրության գաղափարները չէին դադարում մնալ հայ հասարակության առաջավոր խավերի ուշադրության կենտրոնում, հասնելով անգամ հեռավոր գաղութներում ապրող հայությանը: Գրական և մշակութային զանազան միջոցառումների վարագույրի տակ, այլաբանական տարրեր եղանակներով ու ձևերով հայ գրողներն ու հրապարակախոսները, արվեստագետներն ու գիտնականները արժարժում էին ժողովրդի ինքնագիտակցությունը, դրդում էին նրան թոթափելու բռնության լուծը:

Արեւմտահայ իրականութեան մեջ տվյալ ժամանակաշրջանում հրապարակ եկած Պեշիկթաշլյանի, Թերզյանի, Դուրյանի և այլոց հայրենասիրական-պատմական ոգրերգութիւնների հետ հասարակական-քաղաքական հնչեղութիւն են ունեցել նաև Արմանձտյանցի թատերգութիւնները: Այդ են ապացուցում ժամանակակիցների համապատասխան վերաբերութիւնները, որոնց համաձայն Արմանձտյանցի վերոհիշյալ թատերական երկերը 1868—1872 թթ. քննիցս հաջողութեամբ ներկայացվել են թե՛ Վարազում և թե՛ Վանում, գտել ջերմ ընդունելութիւն հանդիսականների կողմից:

Սակայն Դարեգին Արմանձտյանցի թողած ժառանգութեան մեջ առանձնապէս կարևոր տեղ են զբաղում նրա ազգագրական, տեղագրական, ուղեգրական ու հնախոսական երկերը: Դրանք հարուստ են Արեւմտյան Հայաստանի տարրերի դավառների, քաղաքների, գյուղերի, բերդերի, կամուրջների, վանքերի, լեռների, ձորերի, գետերի, աղբյուրների և հայկական բնաշխարհի բնակչութեան կենցաղի, վարք ու բարքի, նիստ ու կացի, աշխատանքային առօրյայի, հավատալիքների, լեզվի և ժողովրդական բժշկութեան վերաբերյալ բազմաթիւ թանկարժէք տեղեկութիւններով:

Առանձնապէս արժեքավոր է այս տեսակետից նրա «Թորոս աղբար» խորագրով ուղեգրական աշխատութիւնը, որի առաջին մասը լույս է տեսել 1879 թ., իսկ երկրորդը՝ 1884-ին: Այդ գործի մեջ ամփոփված են այն տեղեկութիւններն ու տվյալները, որ քաղել է Արմանձտյանցը զեպի Սամսոն, Պաֆրա, Աինոպ, Մարզվան, Ամասիա, Զիլե, Թոքատ, Սևաստ, Տիւրիկ, Բենկան, Ակն, Արարկիր, Մալաթիա, Տրապիզոն, Կլումուշխանն, Երզնկա, Կամախ, Կապան-Մատեն, Խարբեռ, Չմշկածագ, Չարսանձագ, Բալու, Արդւն, Չընքուշ և Տիգրանական 1875 և 1878 թթ. իր կատարած պաշտոնական ուղևորութիւնների ժամանակ:

«Թորոս աղբար»-ը, սակայն, չափ հեռու է պաշտոնական շրջադասութիւնների սովորական շոր ու ցամաք հաշիւութիւնից: Այն սերտորեն կապված է հեղինակի անձնական հուշերի ու մտորումների հետ և ունի վերհուշի, նոթի և զեղարվեստական ակնարկի յուրօրինակ մի համադրութեան բնույթ: Իրեն հատուկ բանաստեղծական լեզվով և պատկերավոր ոճով, բանասիրական շեղումներով և քնարական զեղումներով, Արմանձտյանցն այստեղ ներկայացրել է հիշյալ վայրերի և այդ վայրերում ապրող հայ բնակչութեան կենդանի ու ճրճմարտեցի պատկերը, չքաւ անցյալն ու ներկան, կենցաղային, բարոյական, տնտեսական ու քաղաքական գոյավիճակը:

Կարգալով «Թորոս աղբար»-ը, ընթերցողը ոչ միայն լավ ծանոթանում է Արմանձտյանցի շրջապագած վայրերին, այլև ճանաչում է հեղինակին, հաղորդակից դառնում նրա ապրումներին ու մտորումներին, լսում է հայրենաբաղձ բանաստեղծի սրտի տրոփիւնը, զգում է նրա աչքերի մեջ ծովացող արցունքները՝ ի տես օտարի կողմից հափշտակված հայրենի հող ու ջրին, լեռներին ու հովիտներին, ի տես հարագատ քաղաքաշար ժողովրդի արյունածոր վերքերին, նրա հնօրյա վանքերի ու ամրոցների ավերակներին և ի բաղդատութիւն Հայաստանի հինավուրց փառքի և ներկայի անմխիթար վիճակի:

Քննութեան առարկա աշխատութիւնը հետաքրքիր է հատկապէս հեղինակի հասարակական-քաղաքական հայացքների բացահայտման տեսակետից: «Թորոս աղբար»-ի մեջ մենք գտնում ենք բազմաթիւ տեղեր, ուր Արմանձտյանցը անխնա ու անաչառ քննադատութեան է ենթարկում իր հայրենիքի հոգի կող-

մեր, միջոցներ է առաջարկում դրանց վերացման համար, խելացի ու գործնական խորհուրդներ է տալիս հայրենակիցներին՝ նրանց ունենալիք ճիշտ վարքագծի համար:

Լինելով կոչումով ու պաշտոնով հոգևորական, Սրվանձտյանցը երբեք չի փորձել քողարկելու եկեղեցու հայրերից ոմանց այլանդակ արարքները, նրանց անիմաստասեր և շահամոլ վարքը: «Կարի տխուր է տեսնել մեր վանքերու անշեն և ինկած վիճակը նույն իսկ մեր ձեռքով, մեր օրով: Որքան մեղավոր եմք, որ մեր նախնայաց մեզ թողուցածը գոնե պահել և վայելիլ չգիտենք: Ի՞նչ դժվարություն կա, որ յուրաքանչյուր զավառը իր մեջը կամ վանք մը կամ եկեղեցի մը հատկացնե թանգարան հին մատենից, ինչպես ըրավ ի Վարագ մեր Ս. Հայրիկն, և հոն խնամքով հավարեն, կարգավորեն ու պահեն այդ գանձերը ապականութենե և հափշտակութենե. հափշտակություն. դոր չեն կատարեր ելուդակներ, այլ զօջաբաղք, որոց ձեռքով կվաճառվին ավետարաններ և զանազան ընտիր ձեռագիրներ ու կփոխադրվեն հարևմուտս, իբրև հնություն և հրաշալիք արվեստից, մնացյալներն ալ հողույն տակ, կաթիլներուն տակ, փռչինեցու մեջ կոշնչանան և կանհետին»³, — գրել է նա «Թորոս աղբար»-ի երկրորդ պրբում:

Հավ գիտակցելով հայկական հին գրչագիր մատյանների մեծ նշանակությունը՝ իբրև պատմա-գրական կարևոր սկզբնաղբյուրների և գեղարվեստական թանկարժեք գանձերի, Սրվանձտյանցն ինքն իր ուժերի ու ժամանակի ներածին շափ գրադվել է դրանց ուսումնասիրությանը և նկարագրությանը, մտահոգվել վերջինների պահպանման գործով, խառն է քաշել ձեռագրերի հիշատակարանների հավաքման ու տպագրության անհրաժեշտության կարևոր հարցը:

Հաճախակի անդրադառնալով պանդխտության և գաղթականության կորստաբեր հետևանքներին, Սրվանձտյանցը միշտ հորդորել է իր հայրենակիցներին տոկալու ամեն կարգի դժվարությունների և ոչ մի կերպ չբաժանվելու հայրենի հողից: «Ժողովրդյան մը ու ազգի մը կյանքը հոգեկան կապեր ունի իր ծնած հողին ու արևին հետ, իր հորն ու մոր գերեզմանին հետ, գետին և արտին հետ, աղբյուրին և ծաղկին հետ, ասաղին ու ամպին հետ, վանքին և սուրբին հետ, թռչնոցն և անտառին հետ, թմբուկին ու պարին հետ, գոմին և գոմեշին հետ, հորթիկին և զառնուկին հետ, թոնիրին և մուխին հետ...»: Եվ ապա. «Ինձ ծանոթ է, թե քանիցս մեր զավառներեն դաղթել ուզողները՝ դրացի պետութենեն պատասխան ընդունած են բնակելու Կովկասեն հեռու: Ինչո՞ւ: Որպեսզի շտեման Մասիսը, շտեման Այրարատը, հեռի Գեղամա ծովեն, Արագածի հովերեն... Այո՛, գիտեն պետությունները, թե՛ խոտն իր արմատին վրա կգարգանա և կկանանչի, խաղողը իր բուռած հողին վրա կհասունանա, մանուկն իր մորը ջերմիկ ծոցը կգարգանա...»⁴:

Իբրև հարազատ ժողովրդի ծոցից ելած և նրա հետ ամուր կապված իսկական հայրենասեր, Սրվանձտյանցը երբեք չի կորցրել իր լավատեսությունը Հայաստանի ազատագրության ու վառ ապագայի նկատմամբ: Նույն «Թորոս աղբար»-ի մեջ նա աներեր հավատով գրել է. «Ամեն երկիր գիշեր կլինի, խավար կունենա, բայց չէ՞ որ ամեն օր առավոտ կբացվի, լույս կլինի. ձմեռվանեն

3 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մասն Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 247—248:

4 Նույն տեղում, մասն Ա., 1879, էջ ԺԸ, ԻՍ—ԻԲ:

հետո՝ կուգա գարուն. ամեն աշնան՝ չորցած, քաղված, տրորված ու զոսացած հոգը՝ կրկին կկանանչի գարնան արևով, կհալին ձյունները, կտաքանան օդերը, կծաղկին դաշտ ու ծառերը, այսպես և մեր վիճակը կնորոգվի...»⁵:

Սրվանձտյանցի «Թորոս աղբար»-ը և ուղեգրական մյուս գործերը, ունենալով կուլտուր-պատմական և ճանաչողական անուրանալի արժեք, միաժամանակ աչքի են ընկնում նաև իրեն զեղարվեստական երկեր: Նրանց հեղինակը սովորական առումով ուղեգրություններ գրող չէ, որ սառը կերպով արձանագրում է իր տեսածն ու լսածը: Սրվանձտյանցը, դրա հետ միասին, նաև բանաստեղծ-գրող է, որը ոչ միայն առարկայորեն արձանագրում, այլև կենդանագրում ու շնչավորում է հայրենի բնաշխարհը, նրա հնություններն ու ավանդությունները, դնում է վերջիններիս վրա իր ապրումների ու մտորումների ուրուշակի դրոշմը: Նա գրավում է ընթերցողին արվեստագետի իր բնատուր անվիճելի ձիրքով ու սուր դիտողականությամբ, վարակում նրան իր ինքնարուխ ու անկեղծ հայրենասիրությամբ ու ժողովրդասիրությամբ: Սրվանձտյանցի ուղեգրական ու տեղագրական նկարագրությունները ուժեղ տպավորություն են գործում իրենց պատկերավոր ու գեղեցիկ բանաստեղծական դրվագներով, հեղինակի ջերմ ու հորդուն հույզերով, բայց մանավանդ իրենց ինքնատիպ, կենդանի ու զուենդ լեզվով ու ոճով, ժողովրդական բարբառների և զրաբարի գանձարանից քաղված և մեծ վարպետությամբ օգտագործված հարուստ ու ճոխ բառապաշարով:

Ինչպես մշակույթի ամեն մի մեծ երախտավոր, այնպես էլ Գարեգին Սրվանձտյանցը ունի իր գլուխ-գործոցները: Դրանք նրա բանահյուսական երկը հայտնի ժողովածուներն են՝ «Գրոց-բրոց» (1874), «Մանանա» (1876) և «Համով-հոտով» (1884) պատկերավոր խորագրերով, որոնցով նա մեր հասարակայնության առջև բաց արեց բազմադարյան հայ բանահյուսության գաղտնաբանների մինչ այդ փակ դռները և առաջին անգամ ծանոթացրեց նրան այնտեղ պահվող բանարվեստի բազում սքանչելի գոհարներին:

Սրվանձտյանցի հայտնաբերած բանահյուսական այդ գոհարներից պետք է նախ և առաջ հիշատակել 1873 թ. նրա գրի առած և 1874 թ. «Գրոց-բրոց» ժողովածուում տպագրված հայ ժողովրդի ազգային մեծ վեպի առաջին պատումը Մշո բարբառով, որ կրում է «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագիրը և որը մինչ այդ բոլորովին անհայտ էր մեր գրականությանը: Մի վեպ, որն իր բուն ժողովրդակն զազափարարանությամբ, արտակարգ հարուստ սյուժեով և զեղարվեստական կատարելությամբ իրավամբ դասվում է աշխարհի լավագույն էպիկական ստեղծագործությունների շարքը: Մի վեպ, որն իր ալլորած դարավոր կյանքով, դարերի ընթացքում կրած պատմական ազդեցություններով և փոփոխություններով հազվագեղ երևույթ է առհասարակ վիպական բանահյուսության պատմության համար⁶:

Սրվանձտյանցի պատումն ունի պատմական բացառիկ նշանակություն: Նրա հետ է փաստորեն կապվում հայ ժողովրդական վեպի հայտնագործման

⁵ Նույն տեղում, էջ Ի:

⁶ Տե՛ս Մ. Ա. Բ. և Ղ. յ. Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին (տե՛ս «Սասունցի Դավիթ», Բիրլիոգրաֆիա, Երևան, 1939, էջ 50):

կարևոր հանգամանքը և հերքումը ոմանց այն թյուր ըմբռնման, ըստ որի հայ ժողովուրդը իբր թե չի ունեցել իր ազգային մեծ վեպը:

Այդ պատումի արժեքը, սակայն, միայն պատմական չէ: Այն աչքի է ընկնում նաև ըստ էության. իր ընդարձակ ծավալով, հարուստ բովանդակությամբ, զեղարվեստական հատկանիշներով և, որ նույնպես շատ կարևոր է՝ գրուման հարադատությամբ: Այսօր էլ, երբ մեր ձեռքի տակ կան «Սասնա ծռեր»-ի 50-ից ավելի զանազան պատումներ, Սրվանձտյանցի գրառումը, իրավացիորեն, համարվում է լավերից մեկը:

Գարեգին Սրվանձտյանցի հայտնաբերած ու հրատարակած բանահյուսական գոհարների շարքում «Սասունցի Գավթից» հետո հիշարժան են նրա «Մանանա» (1876) և «Համով-հոտով» (1884) ժողովածուներում տեղ գտած երկու տասնյակից ավելի ժողովրդական հեքիաթները, որոնցից առանձնապես արժեքավոր են՝ «Հազարան-բյուրը», «Դրժիկոն» կամ «Քաջ Նազարը», «Օձամանուկ և Արևահատը» և «Իմաստուն ջուհակը»: Հիշյալ հեքիաթների մեջ մեծ ընդհանրացումների հասնող հոյակապ սիմվոլիկ կերպարներով զրուցված են հայ ժողովրդի ձգտումներն ու երազանքները առատության, ազատ ու անկաշկանդ կյանքի ու աշխատանքի մասին, բնության և հասարակական կյանքի շար ուժերի դեմ պայքարելու նրա անկոտրում կամքը, գոյություն ունեցող մոռյլ իրականությունը վերափոխելու նրա անխախտ ձգտումը:

Կարելի է անվարան ասել, որ Սրվանձտյանցի գրի առած վերոհիշյալ հեքիաթները ո՛չ միայն հայ, այլև միջազգային հեքիաթային գրականության լավագույն նմուշներից են:

Գարեգին Սրվանձտյանցի գրի առած բանահյուսական նյութերի մեջ կան նաև մի քանի տասնյակ ժողովրդական ավանդություններ, որոնք ցրված են նրա «Գրոց-բրոց», «Հնոց-նորոց» (1874), «Թորոս աղբար» (Բ. գիրք, 1884) և «Համով-հոտով» ժողովածուների տարբեր էջերում: Առանձնապես ուշագրավ են դրանցից՝ Արևի ու Հուսնի, Մասիս ու Սիփան սարերի, Սհակ թռչունի, Հայկի ու Բելի, Արայի ու Շամիրամի, Եղիշեի, Խորենացու, Դավիթ Անհաղթի, Հենկ-Թեմուրի և Սուլթան Մուրատի վերաբերյալ ավանդությունները: Պատմության խորքերից սերնդից-սերունդ և որդոց-որդի մեզ հասած այդ հազվագյուտ ու թանկարժեք վիպական մանրանկարների միջոցով մենք պատկերացում ենք կազմում այն վերաբերմունքի և ըմբռնումների մասին, որ ունեցել են Հայաստանի ժողովրդական զանգվածները՝ հայրենի բնաշխարհի և նրա բնակիչների պատմական ճակատագրի հետ կապված մի շարք բախտորոշ անցուղարձերի, դեպքերի ու դեմքերի նկատմամբ:

Պակաս նշանակալից չեն նաև Սրվանձտյանցի գրի առած ժողովրդական երգերը, որոնց բազմաթիվ ու բազմազան նմուշները մենք գտնում ենք նրա «Մանանա» և «Համով-հոտով» ժողովածուներում: Այդ երգերից և՛ բովանդակությամբ, և՛ արվեստով աչքի են ընկնում «Սիրտս նման էր...» սկզբնատողով հայտնի անտունին, «Հուսնակն անուշ»-ը, «Հովերով սեր»-ը, «Մոկացի հայոց հարսանյաց պարերգ»-ը, «Գութանի երգ»-ը, «Փոքրիկ երկրագործ»-ը, «Սույն հնձողներ»-ը, «Արտուտիկ»-ը, «Հազվագ»-ը և «Կոտ ու կես կորեկ»-ը: Վերոհիշյալ երգերի մեջ ինքնատիպ ու գեղեցիկ պատկերներով արտահայտված են հայ ժողովրդի ուրախությունն ու վիշտը, լացն ու ծիծաղը, աշխատանքն ու հանգիստը:

Առանձնապես մեծ է Սրվանձտյանցի հրատարակած «Ակնա ժողովրդական երգեր» շարքի արժեքը: Լինելով միջնադարյան հռչակավոր «հայրենների» հեռավոր արձագանքները, դրանք ճշմարտացի պատկերացում են տալիս մեր ժողովրդի բանաստեղծական մեծ քանքարի մասին:

Բանահյուսական փերոհիշյալ հիմնական ժանրերի հետ Սրվանձտյանցը աչքաթող չի արել նաև հայ ժողովրդական բանավեստի այսպես կոչված «մանր ժանրի» ստեղծագործությունները, ինչպես նաև հարևան ժողովուրդների բառու բանը: Նրա ժողովածուներում առկա են հայկական առակների, առած-ասացվածքների, հանելուկների, աղոթքների մի շարք հետաքրքիր նմուշներ, քրդական «Սիամանթո և Խչիզարե» հայտնի փայլերգի ուշագրավ տարրերակներին մեկը և այլն:

Գարեգին Սրվանձտյանցի զրի առած բանահյուսական լավագույն նյութերը մեզանում անփոխարինելի նյութ ու առաղձ են հանդիսացել բազմաթիվ բանագիտական հետազոտությունների և դրական ստեղծագործությունների համար: Հիշենք դրանցից մի քանի կարևորները միայն:

Նշանավոր լեզվաբան-բանասեր Քերովրե Պատկանյանը իր «Նյութեր հայերեն բարբառներն ուսումնասիրելու համար» խորագրով մատենաշարի II պահում, ուրիշ նյութերի հետ, 1875 թ. հրատարակում է նաև Սրվանձտյանցի զբի առած «Սասունցի Դավթի» առաջին պատումը, կցելով նրան Մշո բարբառի բառաբանը և համառոտ քերականական ծանոթություններ նույն բարբառի վերաբերյալ:

Տարիներ անց, Մ. Աբեղյանը, «Սասունցի Դավթի» Սրվանձտյանցի և իր զրի առած Մոկաց պատումների հիման վրա, «Մուրճ» ամսագրի մի շարք համարներում տպագրում է «Ազգային վեպ» խորագրով մի ընդարձակ հետազոտություն, որի մեջ նա համոզմունքով ու հանգամանորեն քննության է առնում մեր վեպի պատմական և դուրյազնական հիմքերի հարցը և հարակից ուրիշ խնդիրներ:

Ղազարոս Աղայանը Սրվանձտյանցի հրատարակած «Ծամանուկ և Արևահատ» և «Բմաստուն ջուհակը» հեքիաթների հիման վրա դրում է իր համանուն հայտնի հեքիաթները:

Հովհաննես Թումանյանը, օգտվելով Սրվանձտյանցի հրատարակած համապատասխան բանահյուսական նյութերից (օգտագործելով նաև այլ սկզբնաղբյուրներ), ստեղծում է իր հռչակավոր «Քաջ նազարը», «Փոքրիկ երկրագործ», «Ծուլ հնձողներ» և «Արտուտիկ» մանկական զոդտրիկ ոտանավորները և «Մհակ թռչուն» հուդիշ լեզենդը: Այսպես և ուրիշներ:

Գարեգին Սրվանձտյանցի հրատարակած բանահյուսական նյութերը մտել են նաև մեր դասագրքերի մեջ և թարգմանվել ուրիշ լեզուներով:

1881 թ. ժամանակի ականավոր հայ մանկավարժներից Սեդրակ Մանդինյանը, գրական լեզվի փոխադրելով «Սասունցի Դավթի» Սրվանձտյանցի զրի առած պատումը, այն գետնդրում է «Ազգային-դիցազնական աշխարհ» վերնագրով իր կազմած դասագրքի մեջ⁹: Նույն թվականին Գր. Խալաթյանցը

⁹ К. П. Патканов, Материалы для изучения арм. наречий, вып. II, СПб, 1875, № 1—27:

⁹ «Մուրճ», 1889, № 10 և 11, 1890, № 1 և 2:

⁹ Ս. Մանդինյան, Ազգային-դիցաբանական աշխարհ, Թիֆլիս, 1881:

և Ար. Հովհաննիսյանը ուսուերենի և դերմաներենի են թարգմանում Սրվանձ-տյանցի պատումը և հրատարակում այն հիշյալ լեզուներով¹⁰:

Իր բնատուր մեծ խելքն ու անուրանալի տաղանդը Գարեգին Սրվանձ-տյանցը ներդրել է նաև բանագիտության մեջ: Տարբեր առիթներով նա անդ-րադարձել է ժողովրդական բանահյուսության հետ կապված այս կամ այն հե-տաբրթի հարցին, արտահայտել է կարևոր մտքեր, արել դիպուկ կոահումներ, տվել ճշմարտացի գնահատականներ, կատարել ուշագրավ ընդհանրացումներ:

Լինելով «Սասունցի Դավթի» հայտնաբերողն ու առաջին գրի առնողը, Սրվանձտյանցը միաժամանակ հանդես է եկել նաև իբրև մեր ազգային վեպի առաջին ուշիմ ուսումնասիրողը: Իր պատումի համար գրած սեղմ առաջաբա-նում նա առանձին դիտողությունների ու ակնարկների ձևով առաջ է քաշել «Սասունցի Դավթի» ինչպես բովանդակության, այնպես էլ արվեստի ուսում-նասիրության հետ կապված հիմնական հարցերը, տվել է դրանց շատ սեղմ, բայց մեծ մասամբ ճիշտ ու համոզիչ պատասխան, հարցեր, որոնք հետա-գայում խորացվեցին ու ընդլայնվեցին ուրիշների, և առաջին հերթին ու ամե-նից հիմնավոր Մանուկ Աբեղյանի կողմից՝ նրա «Ազգային վեպ» (1889—1890) և «Հայ ժողովրդական վեպեր» (1906—1908) դասական ուսումնասիրու-թյունների մեջ:

Խոսելով «Սասունցի Դավթի» ծագման ժամանակի, տեղագրական միջա-վայրի, նրա հիմքում ընկած գաղափարների և գեղարվեստական առանձնա-հատկությունների մասին, Սրվանձտյանցը գրել է.

«...Կտեսնվին այս ասացվածքին մեջ այնպիսի կտորներ, որ պատմագրու-թյանց կհամաձայնի, բայց և կտորներ ալ կան, որ բոլորովին ժամանակա-գրության, տեղագրության, և ամեն հանգամանաց հակառակ են: Դեպքեր՝ որ հառաջ քան զՔրիստոսն են, քրիստոնեաբար կգրուցվին»:

«Ամբողջ այս գրույցքը նկարագիր է քաջության, ընտանության, բարե-պաշտության և պարզ ու անխորամանկ հարաբերության Դավթին՝ յուր սիրուհի-վույն հետ, յուր խոյանին հետ»:

«Այս գրվածք յուր բոլոր անկանոնությամբ հանդերձ՝ հիանալի ոճեր ունի ասացվածքի: Դյուցազնի բազկի ուժը անհամեմատ ցույց տալու համար՝ երբ Դավթին խել կուտա Ջորջիզի ձեռքեն գուրզը, նետել կուտա այնպես ուժգին, որ տակավին մինչև ցայսօր կերթա նետելու թափեն, Դավթի ուժո անսահմա-նությունը ցուցնելով»:

«Այս գրվածքի մեջ կտեսնե հետաքրքիրն՝ գեղջկական կյանքի հանգա-մանքները: Աբամելիքի մահվան համար Սասունցոց սուգը. Քեռի Թորոսի ուխ-տը՝ «Հացն ու զինին, տեր կենդանի» երգումն, հպատակեցնելու համար թուրք տակեն անցնելու սովորությունը, Դավթի և յուր հորթարած ընկերներին մտեր-մությունը, Խանդուղ խանումին աշուղ ղրկելը՝ Դավթի իրեն վրա սիրեցնելու» և այլն:

Ի վերջո հիշենք նաև Սրվանձտյանցի խորաթափանց կոահումը Մհերի կերպարի դիցաբանական հնագույն ակունքների վերաբերյալ: «Մհերի դոան» մասին Սրվանձտյանցը, իբրև ծանոթություն, գրում է, թե այն՝ «ամենալերջ

¹⁰ Г р. Х а л а т ь я н ц, Давид Сасунский, СПб, 1881, էջ 51—82, „Armensche Bib-liotheek“, IV, 81—82.

քար է, որ տաշեր և կոկեր են մեծ դռան ձևով և վրան բևեռադրեր զրած են խիստ հստակ»։ Ապա նա բերում է մի քանի ավանդություններ այդ «դռան» ետևում իրր փակված Մհերի մասին, ավելացնելով, թե «ուրեմն այս կերպով Մհեր կլինի աշխարհի բախտը դարձնող և ոսկի բաշխող շաստված մը. գուցե Մհերն ինքն Միհր Մեծն լինի, և իր դուռը ուղղակի հարավո հանդեպ կամ արևու լինելով՝ պաշտելու պատշաճ»¹¹։ Մհերի և Միհրի միջև եղած կապի վերաբերյալ Սրվանձտյանցի այս խորամիտ կռահումը տարիներ անց, փաստական հարուստ նյութերի ու այլազգի գուգահեռների հիման վրա, մեզանում հավաստեցին ու հաստատեցին ուրիշ գիտնականներ¹²։

Սրվանձտյանցը եղել է նաև մեր ժողովրդական հեքիաթների առաջին բնութագրողն ու գնահատողը։ «Մանանա» խորագրով իր բանահյուսական ժողովածուի առաջաբանում, սեղմ տողերի մեջ, նա կարողացել է վեր հանել տվյալ ժանրի հիմնական առանձնահատկություններն ու արժանիքները։ Ես գրել է.

«...Վեպն ու զրույցը, որ ժողովրդյան բերնով հեքիաթ է, հորինված կլինի բարոյական խրատու համար. և իրր դյուցազներգություն՝ քաջաց քաջություն հռչակելու կամ այլոց օրինակ տալու համար։ Հեքիաթներու շարադրության մեջ միշտ կարգ մը կա. ուղևորություն հեռավոր և անժանոթ աշխարհները. հրաշալի և ահոնի նկարագրությունք վայրուց և անձանց. դիպվածք, արկածք ի նենգութենն բնկերաց կամ ևղբարց, երբեմն ևս ի ծնողաց։

Սիրահարական ամեն հեքիաթի աղն է. բավական ճարտար հանգույցներ ու կապեր ունի. բարի և չար ոգյաց՝ ջիներու, դեերու դերեր. անմահություն ջրույն և պտղույն, տեղվույն և կենաց միշտ հետամուտ։ Ի պաշտոն կրկոշվին կենդանիք, գազանք և թռչունք, որ յուրաքանչյուրը մեկ-մեկ մարդ անձանց դեր կկատարեն։

Դյուցազունք և գյուցազնուհիք երբ ի հանդես կուգան, և երբ ճապուկ ճարտար լեզու մը զանոնք կզրուցե, մարդու մտաց առջև կպզտիկնան Հերակլյա դյուցազնությունք, Ոսկի գեղման հեքիաթն, Տրովադայի վեպն, Ողիսսոս և յուր կղզիներ, Երեկոյա պարտեզներն, հորս Հոմերոս կպանծա, կամ Տելեմաքն ու Կալիփսոսն, և որ իրոք ժողովրդական վեպեր են»¹³։

Նույն կերպ Սրվանձտյանցը բնութագրել ու գնահատել է նաև մեր ժողովրդական երգերը, բացահայտել նրանց բնույթն ու էությունը, անդրադարձել բնական, աշխատաբային ու հասարակական այն միջավայրին ու պայմաններին, որոնց մեջ ստեղծվել ու տարածվել են դրանք, ընդգծել է այն բարերար ազդեցությունը, որ ունի ժողովրդական երգը մարդկանց ու կենդանիների վրա։ Նա գրել է. «Մանուցյալ է ամենուն, ուր որ ծաղկունք, ծառք, ջուրք, թռչունք, մարգ, արտորայք, լերինք, անտառք, բուրաստանք, հովաստանք իրենց հայրենիք կճանչնան, այն աշխարհի մարդիկ, ի բնութենն զգացյալ ամեն հոգի երգող կլինի և նվագող։ Մեր աշխարհի մեջ կտեսնաս ուղևոր մը իր երկայն ուղևորությանը մեջ կրնթանա՝ խաղ ասելով. նրիվար հեծանող՝ իր ձին լավ քալեցնելու համար խաղ մը կրսե. դրաստավարն և հերկարարն պատշաճ

11 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 126—135։

12 Տե՛ս Թ. Ավդալբեկյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929; Կ. Մելիք-Ռահանյան, Միթրա-Միհրի արքայականն ու զործակիցները (տե՛ս «Գրական-բանասիրական հետախուզումներ», Ժողովածու, Երևան, 1946, էջ 269—327)։

13 Գ. Սրվանձտյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 149—150։

իմաստով, պատշաճ եղանակով քաղցրաձայն կկանչեն խաղեր, և այնքան սո-
վորած են անասունք, երբ վարիչն լոռ, անասունն կկենա: Ձմեռը ձյուն կսրբե՝
խաղ կրսե, փայտ կկտրե՝ խաղ կրսե. բուրդ, բամբակ կզգե, կմանե, կամ շալ
ու կտավ կգործե՝ խաղ կրսե: Տիկինը նստած կով կամ այծ կկթե՝ երգ մը կը-
մամնջե, ճախարակ կմանե, մանուկը կօրորե, խմոր կշաղախե, ավել կրնե,
քաղհանը կրնե, ծաղիկ կփնջե, միրգ կհավաքե, բանջար կժողվե, կար կկարե,
վերջապես ինչ որ կրնե՝ աղվական ձայնիվ եղանակ մը կմամնջե...»¹⁴:

Ուշագրավ ու նշանակալից են նաև Սրվանձտյանցի այն դիտողություն-
ներն ու մտքերը, որ նա արտահայտել է տարբեր առիթներով ժողովրդա-
կան բանահյուսության՝ պատմության, լեզվի և հատկապես արվեստի ու գրա-
կանության համար ունեցած կարևոր նշանակության մասին: Ահա թե ինչ է
զրել նա այդ առթիվ. «Մտածելով թե փայտերը, քարերը և ամենայն ակունք
ու այլ նյութերը նախքան զարվեստավորել՝ իրենց բնական բույսին և կազմին
մեջ խելատ անվայելուչ և անշնորհք երևույթ մը ունին, բայց արվեստավորք
դանոնք թանգ կզենեն. և ինչու ամեն արհեստական նյութը իրեն նախնականը
պատրաստողն ու վաճառողն ունի, ինչու՞ գրարվեստն ալ շունենա: Ահա այս
խորհրդով իմ երկրես իբրև բնծա այս գրվածքս կնվիրեմ... գորս քաղած եմ
հայրենի մրդաստանեն... այն հողեն ու ջրեն, որ Հայաստան անունը կկրեն...»:

Հեղինակի բուն նպատակը, իր իսկ վկայությամբ, եղել է «ժողովրդական
կյանքն ծանոթություններ հիշել, որոնք լույս կարող են տալ մեր ազգային
պատմության և լեզվին կամ գրականության», «որոնք առհասարակ կյանքի
և լեզվի պատմությունը կկազմեն»¹⁵:

Մի ուրիշ անգամ առաջ քաշելով ժողովրդական բանահյուսության տար-
բեր տիպի ստեղծագործությունների գրականության մեջ օգտագործելու ան-
հրաժեշտության հարցը, իբրև գրականության ժողովրդայնությանն ու կատա-
րելիությանը նպաստող կարևոր հանգամանքներից մեկը, Սրվանձտյանցն իր
միտքը հաստատելու համար վկայակոչում է Ռաֆֆուն, որը լինելով «գավառի
հայ ժողովրդյան հոգվույն ու մարմնույն քաջածանոթ և քաջակիր վիպասանը»
իր ազգային վեպերի և մյուս երկերի մեջ մեծ հաջողությամբ իրականացրել է
այդ¹⁶:

Սրվանձտյանցը առաջինն է մեր գրականության մեջ, որ դիտել ու արձա-
նագրել է այն բարերար ազդեցությունը, որ գործել են ժողովրդական երգերը
Քրիզոստոմոսյանի մի քանի տաղերի վրա: Մեջ բերելով մասնավորապես նրա
նշանավոր «Մենդյան մեղեդին» և «Հարության տաղը», նա գրել է. «Կտեսնա՞ս
Ռաֆֆունցի մը երգն: Աչքն ի ծով, Այտն նոնենի, Կուսին նկարագիր՝ Բերանն
երկրիքի. Վարդն ի շրթանց կաթեր. Մոցն լուսափայլ՝ կարմիր վարդով լցյալ...:
Կը տեսնա՞ս Ռաֆֆունցի հոտաղ եզնավարին սրբազնացուցյալ երգն. բնտիր
նկարագիր սայլին որայից խրճաբարձ...»:

Հակադրվելով այն կարծիքին, ըստ որի նարեկացու վերոհիշյալ տաղերի
«տիպն ու ոճը» համարվել է հատուկ միայն նարեկացուն, Սրվանձտյանցը եզ-
րակացնում է. «Ուշագիտ մը մինչև ցայսօր իսկ նարեկյան կրնարին (սահմա-
նին) հայոց ժողովրդական բերան գտնված երգերեն կրնա համոզվիլ, թե նույն

¹⁴ Նույն տեղում, էջ 235—236:

¹⁵ Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, էջ 3, 7—8:

¹⁶ Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1854, էջ 266:

ինքն ս. Գ. Նարեկացվույն ոճն ոչ թե իր հատկական անձնական, այլ հայրենի գավառի տեղական ժողովրդյան ընդհանուր ոճն է»¹⁷:

Ուշագրավ է այս տեսակետից նաև Սրվանձտյանցի մի ուրիշ կարծիք:

Խոսելով Վասպուրականի նշանավոր վանքերից մեկի մասին, որը հայտնի է Կարմրավոր Ս. Աստվածածնի վանք անունով, նա առաջ է քաշել հայ դիցաբանական բանահյուսության բեկորների և շարականների միջև եղած փոխհարաբերությունը, գրելով. «Կարմրավոր. ի՞նչ սիրուն բառ... Այս առթիվ ներելի՛ է կարծել թե Հայոց հին աստուծոց և աստվածուհւոց, Արամազդներու և Անահիտներու համար երգված դիցարանությանց փշրյալ ոսկեղեն երգոց բեկորներեն՝ ժողոված լինին մեր թարգմանիչք շատ մը թանկագին գոհարներ և անոնցմով շարահորինած լինին այնքան վսեմ շարականներ Տերունական... մանավանդ, երբ գիտենք ասոնց մեծ մասն հորիներ է Խորենացին, նա որ ճաշակ ուներ հնությանց և հնախոսությանց, որ մեծ խնամքը գտավ և ավանդեց մեզ գողթնյաց երգերն. «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծիրանի ծովն» և այլն...: Այո՛, մեր շարականաց մեծ մասն Աստվածաշնչով բանաստեղծյալ են. իսկ մասը մը՝ Ազգային շնչով ու լեզվով, որ չէր անհետացած մինչև այն օրերը» (տե՛ս «Համով-հոտով», էջ 62—63):

Չնայած իրենց սեղմ ծավալին և հպանցիկ բնույթին, ժողովրդական բանահյուսության մասին Սրվանձտյանցի մտքերը աչքի են ընկնում ինքնատիպությամբ ու ճշմարտացիությամբ և արժանի են պատշաճ ուշադրության: Բանագիտական մտքի պատմաբանը չի կարող անցնել դրանց կողքով:

Դարեգին Սրվանձտյանցի գրական, հնախոսական, աղագրական, ուղեգրական երկերը և հատկապես նրա բանահյուսական ժողովածուները րստ արժանվույն բարձր են գնահատվել հայ մշակույթի անցյալի շատ ականավոր գործիչների կողմից:

Դեռևս 1881 թ. անվանի հայագետ Գրիգոր Խալաթյանցը, Սրվանձտյանցի հրատարակած ժողովածուների առիթով, հատուկ նամակով դիմելով նրանց հեղինակին, գրել է. «Մեծ է այն ծառայությունը, որ Դուք մատուցիք և շարունակում եք մատուցանել հայ ժողովրդական գրականության Ձեր թանկագին ժողովածուներով: ...Բավական է ասել, որ մենք՝ հայերս մի 5—10 տարի առաջ չունենալով ժողովրդական անգիր գրականության ժողովածուներ, տեղիք էինք տվել շատերին կարծելի՜, թե հայ ժողովուրդը գուրկ է որևէ բանաստեղծական ավանդությունից. բայց այժմ՝ շնորհիվ մանավանդ Ձեր հարուստ ժողովածուներին՝ ամենքին ականերն է, որ հայք ևս ունին ժողովրդական գրականություն, ոչինչ պակաս վսեմ, գեղեցիկ ու բանաստեղծական, քան շատ եվրոպական ազգերի գրականությունը»¹⁸:

1883 թ. արտահայտվելով Սրվանձտյանցի ժողովածուներից «Կայծերի» համար իր քաղած նյութերի մասին, Բաքիին հետևյալ կերպ է բնութագրել նրանց հրատարակչին. «Մեր գրականության մեջ ոչ ոք Սրվանձտյանցի չափ չէ ուսումնասիրել և չէ հավաքել մեր ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքները... նրա շորս ամենահետաքրք-

¹⁷ Գ. Սրվանձտյանց, Մանանա, էջ 237—238, 242:

¹⁸ Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, էջ ԺԽ—Ի:

քիր գրքերը խիստ հարուստ գանձ են մեր հնագետների հետազոտության համար»¹⁹:

Ավելի ուշ, 1915 թ. անդրադառնալով Սրվանձտյանցին և նրա հրատարակած բանահյուսական ժողովածուներին, Հովհաննես Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց, — դրսև է նա, — կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, ուրոնք, ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»²⁰:

Սրվանձտյանցի և նրա երկերի մասին նույն կերպ են արտահայտվել Ղևոնդ Ալիշանը, Մերենցը, Սեդրակ Մանդինյանը, Մանուկ Աբեղյանը և շատ ուրիշներ:

Գարեգին Սրվանձտյանցը բարձր է գնահատվել նաև մեր օրերում: Նրա գրի առած բանահյուսական թանկագին նյութերը, սկսած «Սասունցի Դավիթից» և վերջացրած ժողովրդական հանելուկներով, իրենց պատշաճ տեղն ու արժեքավորումն են գտել վերջին տասնամյակներին մեզանում հրատարակված բանագիտական բոլոր կարևոր գործերում: Այլ կերպ չէր էլ կարող լինել ժամանակի հոլովումով ոչ թե նվազում, այլ գնալով ավելանում է այդ նյութերի արժեքը:

Քանի կա «Սասունցի Դավիթը», քանի կան «Հազարան բլրուլը», «Քաջ Նազարը» և հայոց բազմադարյան բանահյուսության մյուս գոհարները, մեր ժողովուրդը երբեք չի մոռանա Գարեգին Սրվանձտյանցին:

«Հարգս հարգավորաց, պատիվս՝ արժանավորաց», — ասում է հնօրյա իմաստուն խոսքը:

ВЫДАЮЩИЙСЯ ДЕЯТЕЛЬ АРМЯНСКОЙ СЛОВЕСНОСТИ

(К 125-летию со дня рождения Г. Сrvандзтянца)

Член-корр. АН Арм. ССР А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

Среди крупнейших деятелей армянской народной словесности Га-регин Сrvандзтянец занимает исключительное место. Большую ценность представляют его труды по этнографии и путевые заметки, богатые важными сведениями о различных районах, селах, горах Армении, о быте, нравах, обычаях, верованиях и языке ее народа. В этом отношении особенно выделяются путевые заметки «Торос ахпар», первая часть которых была опубликована в 1879, а вторая — в 1884 г.

Наиболее ценными являются сборник Сrvандзтянца «Գրոց-բրոց» (1874), «Մանանա» (1876) и «Համով-հոտով» (1884), в которых он открыт

¹⁹ «Մշակ», 1883, № 143:

²⁰ Հովհ. Թումանյան, Հայոց գետերը, Թիֆլիս, 1915, էջ 42: Նույնի՝ Ծղկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 377—378:

перед читателями двери в сокровищницу армянской многовековой народной словесности и впервые ознакомил их с ее жемчужинами, ставшими незаменимой основой для создания многочисленных фольклористических исследований и литературных произведений.

Срвандзтянцу принадлежит неоценимая заслуга открытия армянского героического эпоса «Давид Сасунский».